



Սայաթ Նովա

Պատկիրքը դալամով քաշած

Էս էլ Դիբա ու յինգիդունիայի հանգում. Արութինի ասած.

Պատկիրքը դալամով քաշած, թահիրը ռանգեռանգ իս անում,
Էրեսիդ խալը ծածկում է՝ մագիրը խափանգ իս անում.
Բացվիլ իս կարմիր վարթի պես, բլբուլի հիդ հանգ իս անում.
Ակոերքը օսկումը շարած, պրոռշըր մահանգ իս անում:

Էրեսը նուր լուսնի նըման՝ քա՛նի կենա կու բուրբվի,
Դաստամագը նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու օլըրվի,
Էնդու համար քու տեսնողը իր ճանփեմեն կու մոլըրվի.
Յիփ մըտնում իս մեջլիսումը, շանգ շուխի շաբանգ իս անում:

Էրեսը տեսնելու գու քան քաղաք քաղկով, գիդ՝ գիդի պես.
Մեռնողը քիզմեն կու առնե անմահական դիդ՝ դիդի պես.
Յիփ տիդենեդ ժաժ իս գալի, շրխշրխկում իս ջիդ՝ ջիդի պես.
Ի նշ կոնիս սանթուր քամանչեն, գուքսը շոնգուր շանգ իս անում:

Ծուցիդ մեշը վարթ, մանիշակ, սընբուլ ու սուսան իս շինի.
Քու տերը բաղըն ի՛նչ կոնե՝ քու հուտը ռեհան իս շինի.
Քամին մեշը անց է կենում՝ մագիրը յիլքան իս շինի.
Աշխարքը ծով, դուն մեշը նավ՝ ման իս գալի, լա՛նգ իս անում:

Տասնենեդ մեկը չին ասի, թեգուզ աշխարըս քիզ գովին.

Նովափար, ծաղիկ ծովային, մանիշակ բաց արած հովին.
Բաս քու Էշխին վո՛ւնց դիմանամ, ջուրը տանե Սայաթ Նովին.
Թե տեսնողըդ մեկ էլ տեսավ՝ դիվանա դաբանգ իս անում: